Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Գ. Վ. ՇԱՌՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Կարլ Մարքսը ուղիղ հարյուր տարի առաջ, 1869 թ. դեկտեմբերին, գրել է. «Հողային սեփականությունը, որն ամեն տեսակի հարստության աղբյուր է, դարձել է մեծ պրոբլեմ, որի լուծումից էլ կախված է բանվոր դասակարգի ապագան... Հողը պետք է լինի միայն ազգային սեփականություն... Հողի ազգայնացումը լիակատար փոփոխություն կմտցնի աշխատանքի և կապիտալի հարաբերակցության մեջ ու վերջին հաշվով բոլորովին կոչնչացնի կապիտալիստական արտադրությունը՝ ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ»[1]։

Հողի հասարակական սեփականության գաղափարը, նրա ազգայնացման մարքսյան դրույթն իր հետագա զարգացումը գտավ Վ. Ի. Լենինի աշխատություններում և առաջին անգամ իրականություն դարձավ Սովետական Ռուսաստանում։

Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր դարագլուխ բացեց ագրարային հարաբերությունների համաշխարհային պատմության մեջ։ Նա Ռուսաստանում կործանեց հին, իրենց դարն ապրած ագրարային հարաբերություններն և հասարակության նյութական հարստությունների սկզբնաղբյուրը՝ հողը, առանց որևէ հատուցման, հանձնեց աշխատավոր գյուղացիությանը։

Դեռևս 1917 թ. ապրիլին բոլշևիկների կուսակցության յոթերորդ կոնֆերանսը քննության առնելով Վ. Ի. Լենինի զեկուցումը ագրարային հարցի վերաբերյալ, ընդունում է մի ընդարձակ բանաձև, որի մեջ շարադրված են տվյալ պատմական էպոխային համապատասխան հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը, ագրարային վերափոխումների բոլշևիկյան պահանջները։

Այդ բանաձևում ասված է. «Պրոլետարիատի կուսակցությունը բոլոր ուժերով պայքարում է բոլոր կալվածատիրական (ինչպես նաև արքունական, եկեղեցական, կաբինետային և այլն և այլն) հողերը Ռուսաստանում անհապաղ ու լիովին բռնագրավելու համար... Պրոլետարիատի կուսակցությունը պահանջում է պետության մեջ եղած բոլոր հողերի ազգայնացում»[2]։

Մոտ մի ամիս անց, 1917 թ. մայիսին, Գյուղացիական սովետների համառուսաստանյան առաջին համագումարում, որի ղեկավարությունը գտնվում էր էսէռների ձեռքում, բոլշևիկյան ֆրակցիան ագրարային հարցի վերաբերյալ առաջարկած իր բանաձևի նախագծում, որը գրել էր Վ. Ի. Լենինը, նշվում է.

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XIII, ч. I, стр. 340—342.

[2] *ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, I մաս, Երևան, 1954, էջ 427։*

«Բոլոր կալվածատիրական և մասնավոր-սեփականատիրական, ինչպես նաև արքունական, եկեղեցապատկան և այլ հողերն անհապաղ պետք է անցնեն ժողովրդին առանց որևէ վճարի... Հողի մասնավոր սեփականությունն առհասարակ պետք է ոչնչացվի...»[3]։

Վերոհիշյալ մեջբերումները երբ բաղդատում ենք 1917 թ. հոկտեմբերի 26-ի (նոյեմբերի 8-ի) Հողի մասին դեկրետի առաջին երկու հոդվածների հետ, տեսնում ենք շատ որոշակի նմանություն։ Այսպես, օրինակ, «Հողի կալվածատիրական սեփականությունը,— ասված է Հողի մասին դեկրետում,— վերացվում է անմիջապես, առանց որևէ հատուցման։ Կալվածատերերի կալվածքները, ինչպես և արքունական, վանքապատկան, եկեղեցապատկան բոլոր հողերը, նրանց ամբողջ կենդանի և մեռյալ ինվենտարով, դաստակերտային շենքերով և բոլոր պատկանելիքներով անցնում են վոլոստային հողային կոմիտեների և գյուղացիների դեպուտատների գավառային սովետների տնօրինությանը...»[4]։

Այն դրան էլ ավելացնենք Հողի մասին դեկրետի հիմքում դրված գյուղացիական «Նակազի» այն պահանջը, որտեղ ասված է, թե «Հողի մասնավոր սեփականության իրավունքը վերացվում է ընդմիշտ» և երկրի «ամբողջ հողը՝ պետական, արքունական, պալատական, վանքապատկան, եկեղեցապատկան, պոսսեսիոն, մայորատային, մասնատիրական, հասարակական ու գյուղացիական և այլն՝ օտարվում է անվճար, վեր է ածվում համաժողովրդական սեփականության և անցնում է նրա վրա բոլոր աշխատողների օգտագործմանը»[5], ապա կարող ենք եզրակացնել, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով իրագործվեց «կալվածատիրական բոլոր հողերը Ռուսաստանում անհապաղ ու լիովին բռնագրավելու և պետության մեջ եղած բոլոր հողերի ազգայնացման» բոլշևիկյան կուսակցության ագրարային ծրագրի մերձավորագույն պահանջը։

Այսպիսով, Ռուսաստանի գյուղացիության հողի մասնավոր սեփականությունը վերացնելու և այն հասարակական դարձնելու «Նակազը» լիովին համընկնում էր բոլշևիկների հողի բռնագրավման ու ազգայնացման ծրագրի հետ։ Մի ծրագիր, որը իրականություն դարձավ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմամբ։

Դա գյուղացիական «Նակազի» միայն մի կողմն էր։

Նորաստեղծ սովետական իշխանության ագրարային քաղաքականությունն ազդարարող Հողի մասին դեկրետի հիմքում դրված գյուղացիական «Նակազը», սակայն, իր մյուս կողմով սկզբունքային հակադրության մեջ էր բոլշևիկների մարքսիստական պահանջի հետ։ Ռուսաստանում հողային հարցը լուծող համագյուղացիական «Նակազը», որը գավառներից ստացված 242 նակազների հիման վրա կազմել և 1917 թ. օգոստոսի 19-ին հրապարակել էին էսէռները, առաջարկում էր հասարակական սեփականություն հայտարարվող հողի օգտագործման հիմքում դնել հավասարարության սկզբունքը (սոցիալիզացիան)։ Մի բան, որին դեմ էին բոլշևիկները։ Համագյուղացիական «Նակազում» բառացի ասված է հետևյալը. «Հողօգտագործումը պետք է լինի հավասար, այսինքն՝

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 611։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 308։

5 Նույն տեղում, էջ 309։

հողը բաժանվում է աշխատողների միջև, նայած տեղական պայմաններին, աշխատանքային կամ սպառողական նորմայով»[6]։

Ջնայած հողի հավասարարության (սոցիալիզացիայի) մանրբուրժուական բնույթին, այնուհանդերձ Վ. Ի. Լենինը այն, ժամանակավորապես, դրեց իր կողմից առաջարկված Հողի մասին դեկրետի հիմքում, որովհետև այդպիսին էր Ռուսաստանի գյուղացիության ձնշող մեծամասնության կամքը։ Պատմության այդ օրերին հողօգտագործման հավասարարությունը ոչ միայն չէր խանդարում սովետական իշխանության ագրարային առաջին վերափոխումներին, այլ, ընդհակառակը, լրջորեն օգնում ու օժանդակում էր հեղափոխական խանդավառությամբ համակված աշխատավոր գյուղացիությանը պայքարի ելնելու նախ՝ կալվածատիրության, ապա և կուլակության դեմ։ Անդրադառնալով գյուղացիության հեղափոխական դերի գնահատմանը, Վ. Ի. Լենինը 1921 թ. Կոմինտերնի 3-րդ կոնգրեսում, նշում է, որ հոկտեմբերին մենք հաղթեցինք, որովհետև «...Գյուղացիական մասսաների 9/10-ը մի քանի շաբաթվա ընթացքում անցավ մեր կողմը»[7]։

Հայտնի է, որ մինչև սովետական կարգերի հաստատումը, Ռուսաստանի աշխատավոր գյուղացիությունը պահանջել և պայքարել է վերացնելու հողի մասնավոր սեփականությունը, այն դարձնելու համընդհանուր՝ պետական-համաժողովրդական սեփականություն։ Սակայն այդ ակնհայտ ճշմարտությունը աղավաղվել է պատմության բուրժուական կեղծարարների, այդ թվում և դաշնակցության «տեսաբաններին» կողմից։ Գյուղացիությունը «բնազդով» ու «իդեալով» հողի մասնավոր սեփականատեր է, «մասնավոր սեփականությունը,— գրում է Ռ. Դարբինյանը,— անոր (գյուղացիության, Գ. Շ.) բնազդն է և միաժամանակ իդեալը, և չի կա որևէ ուժ, որ կարենա խեղդել անոր մեջ այդ բնազդն ու իդեալը»[8]։

Գյուղացու հողի մասնավոր սեփականատիրական «բնազդի» և «իդեալի» բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությանը հարազատ, Ռ. Դարբինյանը պնդում է, թե ռուս բոլշևիկները, երբ անցան իշխանության գլուխ, «յուրացրին» էսէռների ծրագիրը հողի «սոցիալիզացիայի կամ համայնացման» մասին և «բռնի ուժով ջանացին իրագործել զայն»[9]։

Ի՞նչ «բռնի ուժի» մասին է խոսքը։ Ռուսաստանի բազմամիլիոն ու բազմազգ աշխատավոր գյուղացիությունը անվերապահորեն ճանաչեց սովետական իշխանության ո՛չ միայն առաջին դեկրետը՝ Հողի մասին (1917 թ. նոյեմբերի[8]), այլև՝, ինչպես կտեսնենք, 1918 թ. փետրվարի 19-ի օրենքը Հողի սոցիալիզացիայի մասին և հեղափոխական պաթոսով անցավ ագրարային հարաբերությունները վերափոխող պատմական այդ դեկրետների կենսագործմանը։

Սովետական իշխանության հաղթական երթի օրերին գյուղացիական սովետների գլխավորությամբ Ռուսաստանում արագորեն վերացվում էր կալվածատիրությունը և իրականություն էր դառնում աշխատավոր գյուղացիության դարավոր երազանքը։

Սակայն, միայն կալվածատիրության վերացումը, որն ըստ էության նշանակում էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդրի կատարում, չէր

6 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 26, էջ 310։
7 В. И. Ленин. ПСС, т. 44, стр. 30.
8 «Հայրենիք», ամսագիր, 7 մայիսի 1923 թ., էջ 208։
9 Նույն տեղում. էջ 207։

բավարարում սոցիալիստական հեղափոխության ելած պրոլետարիատի դաշնակից գյուղի չքավոր ու աշխատավոր մասսաների պահանջը, չէր ապահովում այդ մասսաների նյութական վիճակի արմատական բարելավումը։

Պետք էր առաջ դնալ, նոր վճռական քայլեր կատարել՝ հողը գյուղի բուն աշխատավորներին տրամադրելու համար։

Բանվորների և գյուղացիների պատգամավորների սովետների համառուսաստանյան 3-րդ համագումարը 1918 թ. հունվարի 18-ին (հունվարի 31-ին) հայտնություն տվեց սովետական կառավարության ագրարային քաղաքականության։ Համագումարը միաժամանակ հաստատեց հողային նոր օրենքի նախագծի հիմնական դրույթները և հանձնարարեց ԿԳԿ-ին՝ հաշվի առնել համագումարում ագրարային հարցի շուրջը արված առաջարկություններն ու դիտողությունները, խմբագրել, վերջնական տեսք տալ Հողային նոր օրենքին, և ապա դնել գործողության մեջ։ Այդ նպատակով ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի կազմում մտան բոլշևիկներից Վ. Ի. Լենինը և Սեմյոն Իվանովը, իսկ ձախ էսէռներից Ա. Լ. Կոլեգայևը և Ա. Մ. Ուստինովը։

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս Հողային նոր օրենքին։ Նա արեց մի շարք լրացումներ և ուղղումներ։ Լենինը օրերով իր ժամանակն անցկացնելով վերոհիշյալ հանձնաժողովում, վիճաբանում էր ձախ էսէռների հետ, լեղու գտնում, հղկում ու ձևակերպում էր սովետական Հողային նոր օրենքը՝ իր բազմաթիվ հոդվածներով[10]։

Խմբագրական հանձնաժողովում վեճը բոլշևիկների և ձախ էսէռների միջև սկզբունքային բնույթ էր կրում։ Մի վեճ, որը նոր չէր, այն գալիս էր մոտիկ անցյալից։ Այլ էր հողի սոցիալիզացիայի օրենքի բուն էությունն ու խնդիրները բոլշևիկների մոտ, այլ էր այն ձախ էսէռների մոտ։ Երբ ձախ էսէռները հողի սոցիալիզացիայի օրենսդրության հիմնական բովանդակությունն ու խնդիրները տեսնում էին հողի մասնավոր սեփականության վերացման, հողի աշխատավորական օգտագործման և հողը սպառողական-աշխատանքային նորմայով հավասարարության հիմունքներով բաժանելու հակասական, իրարամերժ դրույթների մեջ, ապա Վ. Ի. Լենինը (բոլշևիկները) հողի սոցիալիզացիայի օրենքի հիմքում դնում էր երեք հանգուցային պրոբլեմներ և առաջարկում դրանց լուծման ուղիները։ Դրանցից առաջինը այն էր, որ Վ. Ի. Լենինը, տակտիկական նկատառումներով, դեմ չէր հողօգտագործման հավասարարության կիրառմանը որպես ժամանակավոր միջոցառում, երկրորդ. պաշտպանում էր հողի ազգայնացման դաղափարը և երրորդ. ագրարային վերափոխումների մեջ տեսնում էր մանր, կոտորակված հողօգտագործումից հողի կոլեկտիվ, հասարակական մշակմանն անցնելու անհրաժեշտությունը։

Այդ են ապացուցում Լենինի քննադատական մտքերը, որոնք շարադրված են 1918 թ. գրված նրա «Պրոլետարական հեղափոխությունը և renեգատ Կաուցկին» հայտնի աշխատության մեջ։

Անցնելով վերոհիշյալ երեք հարցերի մեկնաբանմանը, Վ. Ի. Լենինը գրում է. «Հողի սոցիալիզացիայի օրենքն անցկացնելով,— մի օրենք, որի «հոգին» հավասարաբար հողօգտագործման լոզունգն է,— բոլշևիկներն ամենալիակատար ճշգրտությամբ ու որոշակիությամբ հայտարարեցին. այդ գաղափարը մերը չէ, մենք համաձայն չենք այդ լոզունգին, մենք մեր պարտքն ենք

10 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 50, էջ 29։

համարում անցկացնել այն, որովհետև այդպես է գյուղացիների մեծամասնության պահանջը։ Իսկ աշխատավորների մեծամասնության գաղափարն ու պահանջները նրանք իրենք պետք է հաղթահարեն. այդպիսի պահանջները ոչ կարելի է «վերացնել», ոչ նրանց վրայով «ցատկել»։ Մենք, բոլշևիկներս, կօգնենք գյուղացիությանը՝ հաղթահարելու մանրբուրժուական լոզունգները, դրանցից որքան կարելի է արագ և որքան կարելի է հեշտ անցնելու սոցիալիստական լոզունգներին»[11]։

Այնուհետև անդրադառնալով հողի ազգայնացման հարցին, Վ. Ի. Լենինը ասում է, որ «նարոդնիկները», այդ թվում և ձախ էսէռները, սովետական իշխանության հողային քաղաքականությունը հողի ազգայնացում չեն համարում։ Մերժելով նման դիրքորոշումը, նա գտնում է, որ բանվոր դասակարգի պետականության օրոք հողի մասնավոր սեփականության ոչնչացումը և այն հասարակական դարձնելը, ոչ այլ ինչ է, քան հողի ազգայնացում։ Դրանից բացի Սովետական Ռուսաստանում ստեղծվել էին այնպիսի «հողային կարգեր,— գրում է Լենինը,— որոնք ամենից ավելի ճկուն են՝ սոցիալիզմին անցնելու իմաստով»[12]։

Ինչ վերաբերում է երրորդ հարցին, ապա Վ. Ի. Լենինը նկատում է, որ Սովետական Ռուսաստանում բանվոր դասակարգի պետության ձեռքումն են գտնվում շատ հնարավորություններ (ֆաբրիկաներ, գործարաններ և այլն), որպեսզի օգնենք գյուղացիությանը ացնելու սոցիալիզմին, և արդեն 1918 թ. կային տասնյակ սովխոզներ, հարյուրավոր գյուղատնտեսական կոմունաներ ու արտելներ, որոնք առաջին քայլերն էին՝ դեպի հողի հասարակական մշակումը։ Բացի դրանից «Հողի ազգայնացումը,— ասում է Վ. Ի. Լենինը,— պրոլետարական պետությանը տվել է հողագործության մեջ սոցիալիզմին անցնելու ամենամեծ հնարավորությունները»[13]։

Հողի սոցիալիզացիայի օրենքը խմբագրող հանձնաժողովում պայքարի ելքը կանխորոշվեց հօգուտ բոլշևիկների։

1918 թ. հունվարի 29-ին (փետրվարի 9-ին) ՌՍՖՍՀ Կենտգործկոմը քննության է առնում հողի սոցիալիզացիայի մասին խմբագրված օրենքի նախագիծը, հաստատում է այն, հրապարակում մամուլում փետրվարի 6-ին (փետրվարի 19-ին) ու դնում գործողության մեջ։ Հողի սոցիալիզացիայի մասին օրենքում, որպես մի ամբողջական օրենսդրական վավերագրի, արտացոլված է երկու սոցիալական գիծ, երկու կուսակցությունների քաղաքական ուղղություն։

Այդ օրենքում ազդարարվում էր հողի, ընդերքի, ջրերի, անտառների, բնության կենդանի ուժերի սեփականատիրության վերացում։ Հողը առանց որևէ հատգնման անցնում էր ամբողջ աշխատավոր ժողովրդի օգտագործմանը։ Հայտարարվում էր հողօգտագործման աշխատավորական սկզբունքը՝ հավասար բաժանմամբ։ Այդ հավասարարությունը պիտի կատարվեր սպառողական-աշխատանքային նորմաների համաձայն, որը սակայն չպետք է գերազանցեր առանձին տնտեսություններում առկա գտնված աշխատունակ ուժերի։

11 Նույն տեղում, հ. 28, էջ 393։
12 Նույն տեղում, էջ 400։
13 Նույն տեղում, էջ 401։

կարողությանը և միաժամանակ հնարավորություն տար հողագործի ընտանիքի անաղքատ գոյությանը»[14]։

Այդ ամենը գյուղացիական մասը արտադրողների պահանջն էր, որ գրի առնվեց հողի սոցիալիզացիայի մասին օրենքում։ Սակայն բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, ձախ էսէռների կամքին հակառակ, կարողացան հողի սոցիալիզացիայի մասին օրենքում մի շարք հոդվածների տալ այնպիսի ձևակերպումներ, որոնց կիրառումը հնարավորություն էր ընձեռում հողագործության մեջ հիմնելու նաև պետական ու կոլեկտիվ տնտեսություններ։

Օրինակ, հիշյալ օրենքի 13, 20, 35 և էլի մի շարք հոդվածներ այդ են վկայում։ Օրենքի 13-րդ հոդվածում գրված է, որ գյուղատնտեսական կուլտուրան բարձրացնելու նպատակով սովետական իշխանության օրգաններին է տրվում հողի որոշակի հատվածներ։ 20-րդ հոդվածով հողօգտագործման իրավունքը առաջին հերթին տրվում էր պետությանը՝ սովետական իշխանության կենտրոնական ու տեղական օրգաններին, հասարակական կազմակերպություններին, գյուղատնտեսական կոմունաներին և ընկերություններին, ապա գյուղական համայնքներին և առանձին ընտանիքներին ու անձանց[15]։

Ձախ էսէռները, վարձում էին սովետական իշխանության ագրարային բուղաքականության հիմքում դնել ստոլիպինականության ոգին արտահայտող հողօգտագործման հատվածային (օտրուբային) ձևը, որ նշանակում էր կուլակության, գյուղի ունևորների և ուռճացած միջակության ձգտումների պաշտպանություն։

Այսպես, էսէռները պաշտպանելով հողը «աշխատանքային» կամ «սպառողական» նորմայով «հավասարարության» հիմունքներով գյուղացիության միջև բաժանելու մանրբուրժուական հակասական ու մշուշապատ պահանջը, կամենում էին յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տալ այնքան հող, ինչքան որ նա կարող էր իր աշխատանքով (և արտադրության միջոցներով) մշակել։ Ընդ որում, այդ «հավասարարությանը» էսէռները ձգտում էին հասնել ոչ թե պրոլետարիատի դիկտատուրայի օրոք, այլ բուրժուական «լայն դեմոկրատիայի» հաստատմամբ։ Ինքնին հասկանալի է ու տրամաբանական, որ ապրանքային տնտեսության պայմաններում էսէռական «հավասարությունը» («սոցիալիզացիան») դառնում էր ցնորք և հողը կենտրոնանալու էր գյուղում հատվածային (օտրուբային) տնտեսություն վարող ունևոր գյուղացիության ձեռքում։

Դրան հակառակ, բոլշևիկները արտահայտելով աշխատավոր գյուղացիության շահերը, պաշտպանեցին և առաջ մղեցին Ռուսաստանի համագյուղացիական նակազի ագրարային հարաբերությունները հեղաշրջող պահանջները և, հենվելով Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարի մեծամասնության կամքի վրա, առաջարկեցին հողօգտագործման այնպիսի ձևեր, որոնք հիմքեր էին նախապատրաստելու գյուղացիությանը սոցիալիստական հողօգտագործման ռելսերի վրա փոխադրելու համար։ Այդ իմաստով էլ ուշագրավ է հողի սոցիալիզացիայի մասին օրենքի 35-րդ հոդվածը, ըստ որի «Սոցիալիզմին շուտ հասնելու նպատակով, Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Հանրապետությունը ամեն կարգի աջակցություն (կուլտուրական և նյութական

---

14 «Сборник документов по земельному законодательству СССР и РСФСР», М., 1951, стр. 24.

15 Նույն տեղում, էջ 25։

օգնություն) է ցույց տալու հողի հասարակական մշակմանը. առավելություն տալով աշխատավորական կոմունիստական արտելներին ու կոոպերատիվ տնտեսություններին՝ մենատնտեսների հանդեպ»[16]։

Ինչպես տեսնում ենք, բոլշևիկների և ձախ էսէռների առաջարկած ագրարային կուրսը բխում էր տարբեր սկզբունքներից, արտահայտում էր տրամագծորեն հակադիր երկու քաղաքական ուղղություն։

Կյանքը գնաց Վ. Ի. Լենինի (բոլշևիկների) ցույց տված ուղիով։

Ինչպես հողի մասին դեկրետը, այնպես էլ հողի սոցիալիզացիայի մասին օրենքը ջերմ ընդունելություն գտան չքավոր ու աշխատավոր գյուղացիության շրջաններում։ Նրանք դաշնակցած բանվոր դասակարգի հետ վերացրին կալվածատիրությունը, բռնագրավելով նրանց տիրույթները և ունեցվածքը և իրենց դասակարգային պայքարի հարվածներն ուղղեցին կուլակության դեմ։

1918 թ. գարնան և ամառվա ամիսներին Սովետական Ռուսաստանի գյուղերում ստեղծվեցին չքավորական կոմիտեներ։ Չքավոր գյուղացիությանը օգնության հասավ քաղաքի պրոլետարիատը։ Մեկ տարվա ընթացքում, 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. նոյեմբերը, Սովետական Ռուսաստանում կատարվեցին ագրարային մեծագույն վերափոխումներ, կատարվեց իսկական ագրարային հեղափոխություն։ Գյուղացիության աշխատավորական օգտագործմանն անցան կալվածատիրական, թագավորական ընտանիքի, վանքապատկան ու կուլակային հսկայական հողատարածություններ։

Մեր երկրում կատարված ագրարային վերափոխումների հետևանքով, չքավոր ու միջակ գյուղացիության օգտագործմանն են անցնում կալվածատիրական, թագավորական ընտանիքի և վանքապատկան 152 միլիոն հեկտար հողատարածություններ։ Բացի դրանից, աշխատավոր գյուղացիությանն է տրվում նաև կուլակությունից բռնագրավված շուրջ 50 միլիոն հեկտար հող։ Եվ եթե մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանի աշխատավոր գյուղացիությունը (չքավոր ու միջակ) ուներ ընդամենը 135 միլիոն հեկտար հողատարածություն, ապա սովետական ագրարային վերափոխումների հետևանքով այդ տարածությունը հասնում է 337 միլիոն հեկտարի։ Կալվածատիրական-ֆեոդալական խոշոր հողատիրությունը խպառ վերացվում է, կուլակության ձեռքին եղած 80 միլիոն հեկտարից մնում է 30 միլիոնը[17]։

Ռեակցիայի գլխավոր սոցիալական պատվարի՝ կալվածատիրության վերացումով աշխատավոր գյուղացիության ձեռքը անցավ նաև 300 միլիոն ռուբլու արժողությամբ կալվածատիրական ունեցվածք (ինվենտար)։ Գյուղացիությունը ազատվեց տարեկան 700 միլիոն ռուբլու հող գնելուց ու վարձավճար մուծելուց, նա ազատվեց նաև ավելի քան 3,5 միլիարդ ռուբլու (ոսկով) պարտքից։ Շուրջ երկու և կես միլիոն գյուղացիական տնտեսություններ դադարեցին գյուղացիական բանկին պարտք լինելուց[18]։

---

16 Նույն տեղում, էջ 29։

17 Տե՛ս «Народное хозяйство СССР», статистический сборник, М., 1956, стр. 97.

18 Տե՛ս Ա. Մ. Անֆիմովի քննադատական դիտողությունները՝ «Вопросы истории», 1955, № 1, էջ 111—112։

Ի դեպ նկատենք, որ սովետական պատմաղրության մեջ շատ տարածված է եղել այն կարծիքը, որ Ռուսաստանի գյուղացիությունը գյուղացիական բանկին պարտք է եղել 1 միլիարդ 300 միլիոն ռուբլի։

Սովետական իշխանության ագրարային քաղաքականությունը արագորեն կերպարանափոխեց գյուղը։ Գյուղացիության սոցիալական կազմի մեջ կատարվեցին լուրջ տեղաշարժեր։ Կուլակությունը պակասեց երեք անգամ։ Եթե մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը կուլակությունը կազմում էր Ռուսաստանի գյուղացիության 15 տոկոսը, ապա 1918 թ. վերջում՝ մոտ հինգ տոկոսը։ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության նախօրյակին բավոր գյուղացիությունը կազմում էր երկրի ամբողջ գյուղացիության 65 տոկոսը, միջակները՝ 20 տոկոսը։ Դրան հակառակ 1919 թ. սկզբներին միջակ գյուղացին դարձավ Սովետական Ռուսաստանի գյուղի կենտրոնական գեսքը[19]։

Սովետական իշխանության ագրարային առաջին վերափոխումների հետ են կապված նաև առաջին հողագործական կոմունաների և արտելների առաջացումը։ Ստատիստիկական հաշվումները ցույց են տալիս, որ 1918 թ. ՍՍՀՄ-ի տերիտորիայի Եվրոպական մասում, որտեղ իշխում էին սովետները, կազմակերպվել էին 1361 գյուղատնտեսական կոմունաներ, 1189 արտելներ, 146 հողը համատեղ մշակող ընկերություններ և 254 կոլեկտիվ տնտեսություններ, որոնց ձեր մնացել է անհայտ, ընդամենը՝ 2950[20]։

Ռուսաստանում սովետական իշխանության գոյության առաջին տարում կատարված ագրարային առաջին մեծ վերափոխումները սոցիալական ամուր հիմք ստեղծեցին ավելի ամրապնդելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության քաղաքական դաշինքը։

Այսպիսով, ագրարային վերափոխումների լենինյան ստրատեգիական ու տակտիկական նախագծումներն իրենց փայլուն կիրառումը գտան մեր երկրում սովետական իշխանության օրոք, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում։

В. И. ЛЕНИН И ПЕРВЫЕ АГРАРНЫЕ ПРЕОБРАЗОВАНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ

Г. В. ШАРОЯН
Доктор исторических наук

Резюме

Первые аграрные преобразования Советской власти в России, осуществленные непосредственно под руководством В. И. Ленина, являются поучительным примером решения аграрного вопроса как в теории, так и на практике. В результате осуществления ленинского декрета о земле, вся земля в стране была национализирована и передана крестьянам для трудового пользования; был ликвидирован класс помещиков, конфискованы земли, сконцентрированные в руках кулаков.

В процессе первых аграрных преобразований в Советской России в 1918 г. произошли коренные социально-классовые перемены. Была заложена прочная социальная основа для дальнейшего укрепления политического союза рабочего класса и трудового крестьянства в нашей стране.

19 Տե՛ս «История СССР», М., 1967, т. VII, стр. 427.

20 Տե՛ս П. Н. Першин, Аграрная революция в России, М., 1966, книга 2, стр. 516.